Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,

ակադեմիկոս Ա. Մելքոնյան

ԿԱՐԾԻՔ

ԳՈՌ ԱՐՏՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1920-ԱԿԱՆ-2023 ԹԹ. ԻՍԼԱՄԻ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՆԹԵԶԸ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ատենախոսությունը նվիրված է Թուրքիայում իսլամի ու ազգայնականության սինթեզի գաղափարախոսության ձևավորմանը, զարգացման հիմնական փուլերին, ընթացքին ու դրա փոխակերպմանը՝ ընդհուպ մինչև ներկայումս գերակա քաղաքական-պետական ինքնության վերածվելու առանձնահատկություններին:

Արդի տարածաշրջանային բարդ աշխարհաքաղաքական անորոշության պայմաններում խիստ հրատապ է նման ուսումնասիրության անհրաժեշտությունը, որն ունի ինչպես գիտական, այնպես էլ արդիական քաղաքական ու ճանաչողական կարևոր նշանակություն:

Ատենախոսությունը հայկական գիտական միջավայրում առաջին փորձն է հնարավորինս ամբողջական և համակողմանիորեն ներկայացնել Թուրքիայի Հանրապետության պատմության հոլովույթում իսլամի և ազգայնականության սինթեզի դրսևորումները՝ հասարակական-քաղաքական զարգացումների, պատմական շրջափուլերի և դեպքերի քննության համապատկերում: Բացի այդ, ատենախոսության մեջ առաջ է քաշվել թուրքական պետական-քաղաքական-հասարակական նոր՝ գերակա ինքնության ձևավորման մասին թեզը, որը հիմնավորվել է ինչպես պատմական, այնպես էլ մեր օրերում տեղի ունեցող հասարակական-քաղաքական երևույթներով:

Հեղինակն իր աշխատությունում առաջադրել և փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

- Քննարկել Թուրքիայի Հանրապետության վաղ շրջանում «քաղաքական իսլամի» դրսևորումներն ու դրա հիմքում ընկած իրադարձությունները,

- Ընդհանուր գծերով լուսաբանել թուրքական հասարակական-քաղաքական դաշտի վրա իսլամի և ազգայնականության ներազդեցության խնդիրը հանրապետության գոյության ողջ ընթացքում,
- Ուսումնասիրել իսլամի ու ազգայնականության դերը 1960-1970-ական թթ. քաղաքական կուսակցությունների և գաղափարախոսությունների ստեղծման հարցում,
- Դիտարկել ԱԶԿ իշխանության շրջանում «քաղաքական իսլամի» և ազգայնականության զուգակցման քաղաքականության դրսևորումներն ու առանձնահատկությունները,
- Վերլուծել ԱԶԿ կառավարման շրջանում իսլամի ու ազգայնականության սինթեզի դրսևորումները ներքին ու արտաքին քաղաքակության մեջ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներց, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Այն գրված է գրագետ հայրենով, ունի գիտական բովանդակություն և հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք:

Անհրաժեշտ է նշել, որ հեղինակի օգտագործած աղբյուրագիտական հենքը լիովին բավարար է արդյունավետ և բովանդակային վերլուծություն կատարելու համար:

- Հեղինակն ըստ անհարժեշտության անդրադարձել է նաև տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ տեքստը օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով: Աշխատության մեջ մանրամասն ներկայացված են «քաղաքական իսլամ», «պետականորեն հսկվող իսլամի քաղաքականություն» հասկացությունները:

Գ. Հովհաննիսյանի հետազոտական աշխատանքը բերում է այն հստակ համոզման, որ թուրքական քաղաքական ինքնությունը բարդ և բազմաշերտ հասկացություն է, որը ձևավորվել է պատմական, մշակութային, էթնիկական և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության ներքո: Այն արտացոլում է ազգայնականության, կրոնի, մոդեռնացման փոխազդեցությունը: Ըստ ատենախոսի՝ թուրքական քաղաքական ինքնության հիմնական ասպեկտներն են.

- օսմանյան ժառանգությունը, որը խիստ իդեալականացվում է, որպես դարեր շարունակ բազմազգ և բազմակրոն համայնքների միավորող գործոն,

- քեմալիզմը, որը մինչև վերջերս պետական պաշտոնական գաղափարախոսության հիմքն էր իր աշխարհիկության, ազգայնականության, արևմտյան կողմնորոշման սկզբունքներով,
- կրոնականությունը, որն անընդհատ պայքարի մեջ է աշխարհիկության հետ: Այդ երկու սկզբունքների պայքարը ներկայացված է 1920-ականներից սկսած, այսինքն՝ հանրապետության հիմնադրումից և ներկայացված է քաղաքական շարժընթացի մեջ:

Մուստաֆա Քեմալի ստեղծած պետությունը խորհրդարանական հանրապետություն էր, սակայն քաղաքական համակարգը զգալի փոփոխություններ և կենտրոնացում ապրեց Էրդողանի և իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության օրոք, և հեղինակն այն 2018 թ. հետո բնութագրում է որպես գերնախագահական հանրապետություն: Այս ամենի մասին աշխատությունում մեծածավալ տեղեկատվություն կա՝ տրված համոզիչ փաստարկներով:

Գոռ Հովհաննիսյանի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հիմնավոր են և օբյեկտիվ: Հեղինակը հանդես է բերել աղբյուրների և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ:

Այս արժեքների կողքին ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ.

Ցանկալի կլիներ, որ հեղինակի կողմից քննվող հարցի շրջանակներում առանձին ենթավերնագրով ներկայացվեր Թուրքիայի քաղաքականությունը՝ կապված Հայոց ցեղասպանության և Արցախյան հիմնախնդրի հետ, ինչպես նաև արցախյան հիմնախնդրի համատեքստում անդրադարձ կատարվեր 2021 թվականի հունիսի 15-ին Ադրբեջանի և Թուրքիայի նախագահների կողմից ստորագրված Շուշիի հռչակագրին: Վերոնշյալի առնչությամբ Ալիևը և Էրդողանը հայտարարել էին, որ հռչակագիրը կարևոր պատմական քայլ էր և մեսիջ ամբողջ աշխարհին, հատկապես՝ Հայաստանին:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները բաժնում հեղինակը չի բացատրում, թե ինչու է ուսումնասիրությունից դուրս մնացել դատահիրավական համակարգի վրա իսլամի և ազգայնականության ազդեցության հարցը: Մասնավորապես, 3-րդ գլխի 2-րդ ենթագլխում Հովհաննիսյանը եզրակացնում է, որ

ԱՁԿ-ի բարեփոխումներն ազդել են կրթական և հասարակական ոլորտի վրա (սեղմագիր, էջ 12): Եզրակացությունում նույնպես, նշված է, որ «...Պետական մարմինների կողմից հասարակական, կրթական, մշակութային և քաղաքական կյանքում իսլամական տարրերի ներդրումը վերջնականապես լեգիտիմացրեց «քաղաքական իսլամը» (սեղմագիր, էջ 15): Կարող ենք այս մտքից ենթադրել, որ իսլամական տարրեր չեն ներդրվել դատաիրավական ոլորտում, օրինակ՝ քրեական օրենսգրքում շարիաթականության նորմեր չեն ներմուծվել:

Նույնը վերաբերում է կրոնական և ազգային փոքրամասնությունների խնդիրներին: Մասնավորապես, վերոնշյալ փոքրամասնությունների նկատմամբ մի կողմից աշխարհիկության, մյուս կողմից՝ «քաղաքական իսլամի» ու ազգայնականության վերաբերմունքը նույն է եղել, թե՞ արմատապես փոփոխված է:

Ատենախոսն ավելի քիչ է անդրադարձել հասարակության մեջ աշխարհիկ և կրոնական ուժերի բևեռացման խնդրին: Աշխատության մեջ որպես իսլամականացմանը խոչընդոտող ուժ մատնանշվում է միայն զինվորականությունը՝ նկատի ունենալով, որ այն այդ հարցում մինչև վերջերս ամենարդյունավետ միջոցն է եղել: Բայց աշխարհիկությունն անհրաժեշտ հիմք է հանդիսանում նաև ժողովրդավարության համար, որն անհնարին է առանց քաղաքացիական հասարակության: Այդ տեսակետից ատենախոսությունից հստակ պատկերացում կարելի է կազմել միայն կուսակցությունների գործունեությունը վերլուծելիս: Մինչդեռ, գրեթե ոչինչ չի նշվում հասարակական կազմակերպությունների և մամուլի դերի մասին: Հանրահայտ է, որ ավտորիտարիզմի խորացումն արտահայտվում է ոչ միայն դատական համակարգի անկախության, այլ նաև մամուլի ազատության սահմանափակման միջոցով:

Աշխարհաքաղաքական անկախ դերակատարի դերն ամրապնդվում է նաև տարածաշրջանում տնտեսական էքսպանսիայով: Ուստի աշխատանքը կշահեր, եթե այդ հարցին հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար (նշենք նաև, որ առանձին դեպքերում տնտեսության արդիականացման գործոնի խնդրին որոշ անդրադարձ կա և նշվում է, որ իսլամացումը օգտագործվում է արաբների ինվեստիցիոն կապիտալը երկիր բերելու համար):

Աշխատության մեջ խոսվում է Էրդողանի վերաբերմունքի փոփոխության մասին ԵՄ նկատմամբ: Բայց չի նշվում, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության խնդիրը

սառեցվել է այդ երկրում մարդու իրավունքների հետ կապված մտահոգությունների և ժողովրդավարական հետընթացի պատճառով:

Նշված բացթողումները, ինչ խոսք, չեն նսեմացնում Գոռ Հովհաննիսյանի կատարած գիտական ուսումնասիրության արժանիքները: Դրանք ուղղելու, լրամշակելու դեպքում՝ աշխատանքը որպես մենագրություն հրատարակելիս ավելի ցայտուն և օգտակար կդառնա սույն աշխատության գիտաքաղաքական նշականությունը:

Քննարկման ներկայացված ատենախոսությունը խոր և բազմակողմանի ուսումնասիրություն է: Այն վկայում է հեղինակի գիտական հասունացման և բարդ հարցերին ինքնուրույն լուծումներ տալու հմտությունների մասին: Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած հոդվածներում և սեղմագրում արտացոլված է աշխատության հիմնական բովանդակությունը:

Այսպիսով, Գ. Հովհաննիսյանի սույն աշխատությունը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Սույն կարծիքը միաձայնությամբ հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի 2014 թ. դեկտեմբերի 2-ի նիստում, որին մասնակցում էին բաժնի վարիչ, ակադ. Ա. Մելքոնյանը, պ.գ. դոկտորներ Գ. Մախմուրյանը, Ա. Հակոբյանը, պ.գ. թեկնածուներ Մ. Հարությունյանը, Տ. Հակոբյանը, Ա. Բաղալյանը, Լ. Զաքարյանը, Ս. Ավետիսյանը, Գ. Վարդանյանը, Ռ. Ազիզբեկյանը, կրտսեր գիտաշխատող Ն. Մովսիսյանը, ավագ լաբորանտ Է. Դաղայանը:

Նորագույն պատմության բաժնի վարիչ Ա. Մելքոնյան

Ա. Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Ինստիտուտի գիտքարտուղար
պ.գ.թ., դոցենտ Հ. Մուրադյան

2 դեկտեմբերի, 2024 թ.